ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

1991 թվականի մայիսի 16-ին Թուրքիո հայոց նորընտիր Պատրիարք Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Սա Պատրիարք Հոր առաջին այցելությունն էր Մայր Աթոռ պատրիարքական հանգամանքով: Տ. Գարեգին Պատրիարքը ուխտավորաբար Մայր Աթոռ էր ժամանել՝ նորոգելու իր ուխտը Ս. Էջմիածնի հետ և մեկ անգամ ևս իր հավատարմությունը հայտնելու Ամենայն Հայոց Հայրապետին:

Նույն Ամենապատվությանը ընկերակցում էին պատրիարքական փոխանորդ գերշ. Տ. Մեսրոպ եպս. Մութաֆյանը, Սամարիայի երեց Տ. Պասակ քհն. Թեզենջյանը և ուխտավորների մի մեծ խումբ:

Պատրիարք Հայրը «Հրաշափառ»-ով հանդիսավորությամբ առաջնորդվեց Մայր տաճար: Իջման ս. սեղանի առաջ Ամենապատիվ Պատրիարքին բարիգալստյան ջերմ խոսք ասաց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Սրբազան Պատրիարքն իր գոհունակությունը հայտնեց ջերմ ընդունելության համար և շեշտեց, որ հայրենիքի նոր կացությունը կնպաստի Թուրքիո հայության հաճախակի այցելություններին դեպի Մայր Հայրենիք:

Նույն երեկոյան Վեհարանում Տ. Գարեգին Պատրիարքի այցելության առթիվ Վեհափառ Հայրապետի կողմից տրվեց ընթրիք:

Հաջորդ օրը, մայիսի 17-ին, Վեհափառ Հայրապետն ու Սրբազան Պատրիարքը իր շքախմբով այցելեցին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանին:

Նույն օրը Ամենապատիվ Պատրիարքը Երևանի հեռուստատեսությամբ խոսեց Թուրքիո հայ գաղութի մասին:

Մայիսի 19-ին, Հոգեգալստյան տոնին, Ս. Էջմիածնի Մայր տաճարը լեցուն էր հավատացյալների հոծ բազմությամբ: Բազմաթիվ ուխտավորներ կային ինչպես Հայաստանի տարբեր քաղաքներից ու շեներից, այնպես էլ արտերկրի տարբեր գաղթօջախներից: Պատարագիչն էր Թուրքիո հայոց Պատրիարք գերշ. Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը:

Կիրակի առավոտյան, ժամը 11-ին, եկեղեցական թափորը Վեհարանից Ամենապատիվ Պատրիարքին առաջնորդեց Մայր տաճար: Գարեգին Պատրիարքը, օրհնելով հավատացյալների խուռներամ բազմությունը, բարձրացավ ս. Խորան:

«Հայր մեր»-ից առաջ ս. սեղան բարձրացավ նաև Ամենայն Հայոց Հայրապետը և, դիմելով հավատավոր հայորդիներին, ի մասնավորի ասաց.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ
(19 մայիսի)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ուղիղ եղիցին աղօթք մեր որպէս խունկ առաջի քո Տէր»:

Տեր Աստված, մեր աղոթքները թող խունկի նման ուղիղ բարձրանան դեպի քեզ՝ դեպի երկինք:

Սիրելի հավատացյալներ, այսօր կիրակի է և պատարագ է մատուցվում մեր այս սուրբ տաճարի կամարների ներքո: Աղոթքի պահ է, մանավանդ, որ սովորական կիրակի չէ այսօր, այլ Հոգեգալստյան կիրակին: Այսինքն այն կիրակին, երբ մեր Սուրբ Եկեղեցին փառաբանում է հիշատակը Ս. Հոգու գալստյան, Ս. Հոգու էջքին Վերնատան մեջ՝ Ս. Առաքյալների վրա, եկեղեցու վրա, մարդկության վրա: Ս. Հոգին, որ Աստվածային Ս. Երրորդության մեկ անդամն է, մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Հարությունից և Համբարձումից հետո իջավ երկնքից, որպեսզի մշտապես մնա հավատացյալ ժողովրդի կյանքում, մեր եկեղեցու կյանքում՝ իբրև մխիթարիչ և առաջնորդող լույս դեպի մեր կյանքի խաղաղությունը և մեր հոգիների փրկությունը:

Ահա այսպիսի նշանակալից կիրակի է այսօր, երբ մենք հավաքված ենք աղոթելու, խոկալու, և մեր խնդրվածքները առաքելու առ Աստված: Եվ այսօր, սիրելի հավատացյալներ, մենք այս աղոթքի և այս խորհրդավոր պահին, բացառիկ հոգեկան մխիթարություն ունենք՝ մեզ հետ միասին աղոթակից ունենալու մեր հոգևոր բարձրաստիճան բազմաթիվ եղբայրներ՝ եկած հեռու աշխարհներից, Թուրքիայից՝ Իսթամբուլից, Իրանից, Իսպահանից և Իրաքից՝ Բաղդադից: Այսօր ս. պատարագ է մատուցում մեր սիրեցյալ եղբայրը, Թուրքիո հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Գարեգին արքեպիսկոպոսը:

Ինչպես հիշեցի նաև Իրանից, Իսպահան քաղաքից կամ Նոր Ջուղայից, հոգևոր առաջնորդ գերաշնորհ Տ. Կորյուն արքեպիսկոպոս ներկա է այստեղ:

Նաև ներկա է Իրաքի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյան:

Նրանք բոլորը ժամանել են Մայր Աթոռ իբրև մեր հյուրերը՝ մեր հրավերով: Առաջին անգամ չէ, որ նրանք ժամանում են Մայր Աթոռ, բայց այս անգամ նրանց ներկայությունը Հայաստան բացառիկ նշանակություն ունի, որ առնչվում է մեր ժողովրդի, մեր հայրենիքի այսօրվա տագնապալի կացությանց հետ: Սա մեզ համար իսկապես մխիթարություն է և զորակցություն, որպեսզի մենք այս ծանր օրերը կարողանանք անցկացնել առանց տատանումների, առանց կորցնելու մեր հավասարակշռությունը և մնանք հավատարիմ մեր հիմնական ուխտի վրա կրոնական և ազգային իմաստով, մեր հայրենիքի, մեր ազատ հռչակված Մայր Հայրենիքի շահերի պաշտպանության իմաստով:

Սիրելի ժողովուրդ, Կ. Պոլսո հայոց պատրիարքությունը Հայ Եկեղեցվո պատմական նվիրապետական Աթոռներից մեկն է, այն հիմնվել է շատ դարեր առաջ Պոլսո գրավումից հետո: Եվ հենց այս տարի լրանում է այս հայկական եկեղեցական պատմական Աթոռի 530-ամյակը, որ հոբելյանական տարեթիվ կարելի է նկատել: Եվ մենք ուրախ ենք, որ այս առիթով հենց ինքը՝ Ամենապատիվ Սրբազան Պատրիարքը ներկա է մեր մեջ: Այս 530 տարիների ընթացքում Կ. Պոլսո հայոց պատրիարքական Աթոռը մնացել է ան-

շարժ և հաստատ իր հոգևոր և ազգապահպան դիրքերի վրա՝ բազում դրժվարություններ հաղթահարելով պատմության ընթացքում: Ողբերգություններ տեղի ունեցան, մանավանդ ինչպես գիտեք Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին, երբ նահատակվեց մեր թրքահայ հավատացյալ ժողովրդի գրեթե ամբողջությունը: Այսօր, սակայն, պատրիարքական Աթոռը կանգուն է և հաստատուն կրկին իր պատմական, հոգևոր, ազգային առաքելության ճանապարհին: Եվ մենք վստահ ենք, որ նորընտիր Սրբազան Պատրիարքը գահակալության տարիներին (իսկ մենք մաղթում ենք, որ այդ տարիները լինեն բազմաթիվ, գոնե մի երեք տասնամյակ) կկարողանա հետզհետե առավել զորացնել, առավել պայծառ պահել այս Ս. Աթոռը՝ ի մխիթարություն ոչ միայն թրքահայ ժողովրդի, այլ նաև ի մխիթարություն համայն մեր եկեղեցվո և ազգի՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի: Եվ հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, որովհետև այդ դարերի ընթացքում Կ. Պոլսո՝ Թուրքիո հայոց պատրիարքությունը միշտ, տևապես մնացել է հավատարիմ ուղեկիցը Ամենայն Հայոց Կաթողիկոսության: Վկա է փառավոր պատմությունը այդ Աթոռի՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Այսօր, սիրելի ժողովուրդ, մեր հայրենիքը նոր իրադարձությունների և զարգացման ճանապարհի վրա է գտնվում՝ իր հարևան երկրների հետ բարվոք հարաբերություններ զարգացնելու, այս իմաստով ևս նշանակալից է Թուրքիո հայոց Պատրիարքի այցելությունը: Մաղթում եմ, որ այս բարիդրացիությունը զարգանա խաղաղությամբ, և մենք իբրև ժողովուրդ, և իբրև եկեղեցի հասնենք մեր բոլոր արդար իղձերի իրականացման:

Իսկ այժմ, ես, սիրելի ժողովուրդ, կուզեի հրավիրել մեր Սրբազան Ամենապատիվ Պատրիարքին, որպեսզի իր Ս. Աթոռից բերի ձեզ և բաշխի իր օրհնությունները և նաև ողջույնները ձեր Թուրքիո հայոց եղբայրների և քույրերի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի բովանդակալից խոսքից հետո, հավատացյալ ժողովրդին իր օրհնությունը բաշխեց նաև Կ. Պոլսո Պատրիարք Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը.

ՊՈԼՍՈ ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Վեհափառ Տեր,

Խոր հուզումով և նաև երախտիքով կկենամ այս ս. տաճարի կամարներուն տակ, և կերթա իմ միտքս 25 տարիներ առաջ, որ այս ս. սեղանի վրա օծումը շնորհեցիք ինձի իբրև եպիսկոպոս՝ ղրկելու համար հեռու Ծայրագույն Արևելք: Շատ անգամ ալ Ձերդ Սուրբ Օծության հրավերով եղած եմ ի Ս. Էջմիածին և ի հայրենիք: Այս անգամ, սակայն, տարբեր կզգամ, քանի որ ունիմ առավել պատասխանատվության բեռ մը: Նախ կբերեմ Ձերդ Սուրբ Օծության մեր 35 եկեղեցիներու, ավելի քան 80 հազար հավատացյալ Ձեր զավակներուն երախտիքը, սերը և կապը: Ինչպես Ձերդ Սուրբ Օծությունը հայտնեց, միշտ Կ. Պոլսո Աթոռը և իր ժողովուրդը կապված կմնա Ս. Էջմիածնին, հեռու կմնա անիկա քաղաքական միտումներե և ձգտումներե, և գիտե, որ միայն մեկ լույսի խորան մը ունի, մեկ հույսի աղբյուր մը ունի, որ Ս. Էջմիածինն է: Եվ այդ նույն հավատքը կուզեմ, որ միշտ լուսավոր մնա ձեր մեջ և կխնդրեմ Աստուծմե, որ կրկին Ձեր այցելությամբ ավելի ոգևորություն տաք

Թուրքիա ապրող Ձեր զավակներուն: Անոնց համար երբեմն երկնակամարի վրա կրնան ամպեր ըլլալ, բայց Ձեր լուսավոր դեմքը և շունչը իրենց ոգևորություն կպատճառեն:

Սիրելի հավատացյալներ, եղբայրներ և քույրեր, կբերեմ նաև ձեզի ձեր եղբայրներու և քույրերու սիրալիր ողջույնները, անոնց սերը և նաև իրենց զորավիգը ձեր այստեղի կյանքին համար:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Եւ առաքեցից ձեզ Մխիթարիչն Ս. Հոգին»: Եվ ձեզի պիտի ղրկեմ Ս. Հոգին, որ Մխիթարիչն է:

Այսօր երբ կուզենք հասկնալ, թե ինչ է Հոգեգալուստը, պիտի վերառնենք, թե մեր Տիրոջ բացատրությամբ անիկա նախ մխիթարություն էր, ուրախություն և ցնծությունն է, բայց նաև քաջություն և ուժն է: Եկավ Աստուծմե բխած այդ Հոգին, լեցնելու համար մարդիկ, որոնք տակավին տատամսող քայլեր ունեին:

Նորաբույս կյանք մըն էր քրիստոնեությունը նման իր Տիրոջ և պետքը ուներ ուժականության մը, զորության մը ի վերջո, որպեսզի կարողանար նվաճել և իրականացնել այն կյանքը, այն Աստվածային ճշմարտությունը, որ քարոզվեցավ իրենց: Ճիշտ է, առաջին անգամ չէր, որ Սիոնի Վերնատան մեջ Ս. Հոգին կիջներ մարդոց վրա: Նախ անիկա իջավ Իսրայելի մարգարեներուն վրա, իջավ անիկա Եղիային վրա՝ շունչի մը նմանությամբ, Եսայի և Երեմիայի վրա իջավ կրակի տաքությամբ, իսկ այսօր կիջնե անիկա առաքյալներու վրա հրեղեն լեզուներու նմանությամբ: Խոսքը, որ Աստուծո ճշմարտությունն է, պետք է սակայն գար հոգեկան ուժե մը, և այդ Հոգին, որ դարերու ընթացքին Իսրայելի հովիվներեն մարգարեներ առաջ բերավ և աշակերտները վերածեց խեղճ ձկնորսներե ճշմարիտ առաքյալներու: Հոգեգալուստը վերջ կուտա Բաբելոնի աշտարակի շինության լեզվախառնության, ազգերու և ցեղերու այլամերժության, և Քրիստոսի մեջ կստեղծե մեկ ազգ և մեկ ժողովուրդ գաղափարականը: Հոգեգալուստ սակայն կարծեք ավելի հայու տոն է, քան քրիստոնյա եկեղեցվո հիմնարկեքը: Եթե նայինք, կտեսնենք, թե Հոգեգալստյան կհաջորդեն Հայ Եկեղեցվո կարևորագույն օրերը: Շաբաթ մը վերջ՝ Հռիփսիմյանց և Գայանյանց, ապա մեր նախահոր՝ Լուսավորչի Վիրապեն ելլելը և անկե հետո տոն Կաթուղիկե Ս. Էջմիածնի: Գեղեցիկ եղած է դասավորումը տոնակարգին:

Ինչ է այն զորությունը, որ Հոգի կկոչենք: Նախ եթե առնենք բնութենական իմաստով, Հոգին ուժ մըն է, որու շնորհիվ մարդկային կամ բնութենական կյանքը կապրի: Երբ կմահանանք կ'ըսեն **հոգին ավանդեց:** Ըսել է թե, կա նախ բնական հոգի մը, շունչ մը, որ ի վերջո մեզի կապրեցնե: Սակայն, այն, որու մասին մենք կխոսինք՝ տարբեր հոգի մըն է: Իրապես Աստուծմե բխած Հոգին, որուն կըսենք Ս. Հոգի: Այդ Ս. Հոգիի շնորհիվ էր, որ խեղճ ու տկար, երերուն և տատանող աշակերտներ և առաքյալներ, կրցան քաղաքակրթյալ աշխարհներու հորիզոնին տակ թագավորներու, իշխաններու, իմաստուններու դիմաց երթալ և Ավետարանը քարոզել: Այդ զորության շնորհիվ էր, որ անոնք զրահվեցան և իրենց տիրոջ նման դեպի չարչարանքները գացին և չվախցան մահեն: Այդ Հոգին, որ Աստվածային շունչն է, չենք կարող տեսնել, չենք կարող բռնել: Եթե միայն կմտածենք, նյութական գետնի վրա, եթե մարդիկ միայն մատերիալիստ եղած են, չեն կրնար ըմբռնել կամ տեսնել այն հոսանքը, որ այս ջահի լապտերները կվառե: Բայց գիտենք, թե

կա հոսանքը, ուստի կա նաև Աստվածային շունչը, այն ոգին, որ դարերու տևողությամբ գեղեցիկ կյանքեր և անկործան ճշմարտություններ ստեղծեց: Իսկ այն բոլորը, որոնց մեջ չեղավ Աստվածային Հոգին և Աստվածային ճըշմարտությունը, կործանեցան և չքացան աշխարհի երեսեն: Չկա անցյալի քաղաքակրթություն, ոչ Բաբելոնը և բաբելացին, չկա այսօր այդ օրերու ոչ Հռոմը, ոչ հռոմեացին, չկա ոչ Աթենքը և ոչ աթենացին, բայց կա մարդկության հայրը և կապրի այսօր՝ շնորհիվ այդ Ս. Հոգիի միջնորդության և հյուրընկալության: Մենք հավատք ունինք, թե միշտ այդ հոգին՝ Աստուծո այդ շունչը կիջնե մեր վրա, բայց ադիկա բավարար չէ եթե մենք պատրաստված չենք զայն ընդունելու, զայն մեզի հոգեկան կյանք շինելու, ուրեմն վերացական կմնա: Մեր եկեղեցվո բոլոր խորհուրդները՝ մկրտություն, պսակի խորհուրդ, ձեռնադրություն, և այլն կիջնե Ս. Հոգին: Ժամանակավոր են և լպրծուն բոլոր քաղաքակրթությունները և բոլոր քաղաքական տեսությունները, եթե անոնց մեջ չկա Աստվածային շունչ: Աստուծո ճանաչողության մեջ միայն մենք գտած ենք մեր բոլոր դառնությանց լուսավորությունը:

36 տարիներ առաջ այս կամարներուն տակ, երիտասարդ եպիսկոպոս մը դառը օրերու մեջ կկոչվեր Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռին: Անծանոթ մեր երկրին և պայմաններուն, բայց գիտեր դրությունը շատ լավ: Հայ ժողովրդի իրեն հանձնված գործը սիրով առավ իր ուսերուն, ունեցավ տրտում և թախծոտ տարիներ, բայց իր մեջ բոցավառող Ս. Հոգիի՝ Աստուծո շունչը իրեն միշտ հույսի դուռեր բացավ՝ կյանքով և բարեկարգությամբ: Առաջինը եղավ Ամենայն Հայոց Հայրապետներեն, որ միայն չմնաց այս կամարներուն և վանքի չորս պատերու մեջ: Շատ լավ գիտեր, թե արտասահման ևս կային հայորդիներ հեռավոր Ամերիկա և Ավստրալիա, և անոնք 1915-ի արհավիրքեն փրկված հուսահատ սրտերու բնակարաններ էին, պետք էր զանոնք հույսի դռներու բերել: Հովիվը իր հոտին գնաց և այդ բոլորը հավաքեց իր մականի տակ, և անոնք այսօր աշխարհի չորս ծագերեն խումբ առ խումբ գիտեն ճամփան Ս. Էջմիածնի և հայուն հայրենիքին:

Այսօր հոգեգալուստ հայուն տոնն է, հայու վերածնունդի օրը: Ճիշտ է, որ տարտամ և հուսաբեկ աչքեր ունիք, բայց թող լուսավորվին ձեր սրտերը: Հայը շատ է տեսել տառապանք, հայը շատ է անցել փոթորկոտ ծովերից և միշտ հասել խաղաղության նավահանգիստը:

Այսօր այս ս. տաճարին մեջ իմ աղոթքն է, որ Տերը տարիներու շարան շնորհե մեր Վեհափառ Հայրապետին, որ կրկին իջնե Ս. Հոգին՝ լուսավորելու համար աշխարհի մարդկությունը, լուսավորելու համար նաև մեր ժողովուրդը:

Ս. Հոգին պահե մեզ և լեցնե մեզ իր շնորհիվ, օրհնյալ հավիտյանս հավիտենից. ամեն:

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տեղի ունեցավ ճաշկերույթ, որին մասնակցում էին նաև պոլսահայ ուխտավորները:

Մայիսի 20-ին, երկուշաբթի օրը, Պատրիարք Հայրն իր շքախմբով այցելեց աղետյալ վայրեր: Նա եղավ Լենինականում, Կիրովականում և Սպիտակում: Ամենուր Սրբազան Պատրիարքը միսիթարում էր սրտաբեկ ժողովրդին և իր օրհնությունը բաշխում ամենքին: Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում Ամենապատիվ Պատրիարքի նախագահությամբ կատարվեց հոգեհանգիստ՝ նվիրված երկրաշարժի զոհերին:

Հաջորդ օրը, մայիսի 21-ին, Պատրիարք Հայրն այցելեց Մատենադարան, որտեղ հանդիպում ունեցավ գիտաշխատողների հետ:

Ապա Սրբազանը եղավ Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, որից հետո ուղևորվեց Գառնի և Ս. Գեղարդ:

Մայիսի 23-ին, առավոտյան, Ամենապատիվ Պատրիարքը, հրաժեշտ տալով Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռի միաբանությանը, վերադարձավ Կ. Պոլիս: